

Տարեկան դիմել 10 րուբլ, կէս տարեկան 6 րուբլ:

Ուսանողի համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանությունները:

Առարկայադասը, սխեմա են տպագրվում:

Խմբագր. Редакция «Мшак»

Խմբագրությանը քաղ է տուտ օտեան 10—2 ժամ

(Մայիսի կիրակի և փոքր տոները):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով:

Ցայտարարութիւնները համար. գնարու՝ 6:

Խմբագրությանը քաղ են 2 կոպեկ:

ՄՇԱԿ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Նոր մտքեր և հին սերունդ:—ՆԵՐՔԻՆ ՏՆՍՈՒԹԻՒՆ, Նամակ Շամախուց, Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏՆՍՈՒԹԻՒՆ, Հայոց խնդիր: «HOMME DE BIEN» լրագրի թղթակցութիւն: Անգլիա, Նամակ Թիֆլիսից, Արտաքին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆՈՐ ՄՏՔԻՆ ԵՒ ՀԻՆ ՍԵՐՈՒՆԻ

Տաս տարի է որ գոյութիւն ունի մեր լրագրի, տաս տարի է որ մենք ջանում ենք ցոյց տալ այս կամ այն դիպուածում մեր հասարակութեան մէջ գործող անձանց պեղծութիւնները, մեր մէջ եղած հասարակական, ազգային հաստատութիւնների պակասութիւնները: Բայց պէտք է խոստովանենք, որ մեր այդ աշխատանքից որ և է պտուղներ մինչև այժմ չենք նշմարում:

Յայտնել հասարակական պակասութիւններ, մտաբերել անիրաւութիւններ, մերկացնել զեղծութիւններ,—այն հետեանք պէտք է ունենայ, որ մարդիկ փոխվեն, զբաղվեն, հաստատութիւնները բարւոյն: Բայց այդ տեսակ հետեանքին կարելի է հասնել այն տեսակ հասարակութեան մէջ, որտեղ գործող անձինք զիտեն թէ իրանց պարտաւորութիւնը չը կատարած ժամանակ նրանց տեղիքը կը բռնեն ուրիշները, աւելի լաւերը, այն ժամանակ նրանք զգոյշ կը լինեն և կաշխատեն զբաղվել: Իսկ երբ որ զիտեն թէ բացի նրանցից ուրիշ գործողներ չը կան, ամեն բան իրանց և իրանց նմանների ձեռքում է և ինչպէս առում է իւրանց առածը «մի ձեռք միւս ձեռք է լուսնում», այն ժամանակ ինչքան կամենաք զրնցէք, մերկացրէք անիրաւութիւնները, մտաբերէք պակասութիւններն ու զեղծութիւնները,—ձեր երեսին կը ծիծաղեն միայն, լաւ գիտենալով որ հասարակական ամեն փոխոտոնները, ամեն օրգանները, ամեն հաստատութիւնները իրանց ձեռքում են և հասարակութեան մէջ չը կան մարդիկ էլ որ իրանց փոխարինեն: Նրանցից, որոնց մասին գրվում է, բաղկացած է ամբողջ հասարակութիւնը: Իսկ նրանք, որոնք գրում են, չունեն իրանց համար մի կուսակցութիւն:

Այդ պատճառով մարդը, տաս տարի գործելուց յետոյ, հասնում է այն տխուր եզրակացութեանը, թէ զուր են, ապարդիւն են իր ջանքերը խիստ քննադատութեամբ փոխել հասարակական ներկայ երեւոյթները, քանի որ այժմեան սերունդը զոյւլութիւն ունի:

Մնում է միայն մի բան սերմանել ժողովրդի մէջ առողջ գաղափարներ, ապագայ սերունդը կրթելու համար: Ներկայ սերունդը հիմնել, իսկ մեր այժմեան սերմանած մտքերը կը բուսնեն և կաճեն ապագայ սերունդի սրտերում և կը բերեն այն պրոտոկները, որ չը կարողացան արդիւնաբերել այժմեան անսիրտ և փշտացած սերունդի մէջ:

Ներկայ սերունդի պակասութիւնները, անիրաւութիւնները, զեղծութիւնները և յանցանքները քննադատել, մերկացնել, մտաբերել,—ապարդիւն ջանք է յայտնում:

Բայց շարունակենք մեր գործը, միմիայն ինչ որ մենք գործում ենք մեզ թըշնամի ներկայ փշտացած սերունդի հաւանքների համար:

Ներկայ սերունդը մեզ գէտ է, մեր մտքերին թըշնամի է,—բայց մենք պէտք է այնպէս անենք որ նոյն իսկ այդ մեզ թըշնամի սերունդի զաւակները հասակ առնելով, մեր մտքերի կուսակցները դառնան:

Իսկ կը լինի մեր վարձը մեր աշխատանքի համար, զա կը լինի մեր վրէժը ներկայ սերունդից, մեր վերաբերութեամբ նրա անտարբերութեան և անելութեան փոխարեն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏՆՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

Սեպտեմբերի 9-ին

Անձնական գործերիս պատճառով կարճ միջոց գտնվելով Շամախի քաղաքում, այստեղի ազգային և եկեղեցական գործերը և հայ ժողովրդի պառակտեալ գրութիւնը ինձ վրա տըխուր տպաւորութիւն գործեցին. նախ և առաջ մտնելով ազգայն թեմական ասված դպրանոցը, տեսայ այնտեղ մի քանի կտորոված նստարաններ՝ ուսումնարանի մութ և նեղ սեղանները աւելի յարմարութիւն ունեն գոմանոցի, քան թէ որ և իցէ դպրոցի. պատերի ձեփերը թափված, լուսամուտների ապակիքը փշտոված և առատադները անձրեւի սաստիկ կաթելուց բորբոսնած, որ ներս մտած ժամանակ խոնաւութիւնը և գոլորշին շնարգել էին անում մարդու: Սեպտեմբերի սկզբին, մինչդեռ պիտի սկսվէր դաստաւորութիւնը, մէկ նոր վարձած ուսուցչի ստիպմամբ սկսել էին նոր ձեփել ու սպիտակացնել պատերը, նստարանները նորոգել, լուսամուտներին ապակիքը գցել և տանիքը կարկաստել: Օրիորդաց ուսումնարանի շինութիւնը, որ յատակադիր մի երկու արշին հազիւ թէ բարձրացած է, դեռ անցեալ տարվանից մնում է այնպէս թերի գրութեան մէջ, և ոչ ոք չը կայ, որ սերտանց ժամանայ և շարունակէ շինութիւնը: Տեղիս եպիսկոպոսը, թէն քանի անգամ առաջարկութիւն է արել ժողովրդին այս մասին, բայց մի աջողակ հետեանքի չէ հասել, և ինչպէս պատմեցին ինձ, այդ շինութեան և նոյն իսկ օրիորդական վարժարանի հիմնադիր գործիչները բարձի թողի են արել ազգային գործերը: Կիրակի օրեր պատարագի ժամանակ մի քանի անգամ մտայ նորաշէն եկեղեցին, բայց ինչ ցաւով տեսարան. այդ ահալին փառաւոր եկեղեցու մէջ հինգ մարդ չը կար ինչպէս առաջի, միշտ այնպէս է լինում. ժամերգութիւնը յոյժ անախորժ էր և միանգամայն զուրկ ներդաշնակութիւնից, Հայոց ժողովրդի մէջ արդարեւ նկատեցի կուսակցութիւնը, այդ կուսակցութիւնների մէկին պատկանում է Ծ ինքը եպիսկոպոսը. թէ որ կողմն է ճշմարտութիւնը և որ կողմը անարդարութիւնը, հաստատ չեմ կարող ասել, միայն այսքան իմացայ, որ այդ կուսակցութիւնների պատճառով ազգային գործերը աւաճ գնալ չեն կարող և միշտ ժողովուրդը յուզմունքի մէջ կը գտնվի: Երկուսն զարդոյնքի ուսումնական առաջադիմութիւնը, ինչպէս առում էին, շատ թոյլ և յետադէմ է եղել, մանաւանդ օրիորդաց վարժարանին, ուր ութ ամիս միջոցում երեք զանազան մեթոդի ուսուցիչներ են փոխված:

Վաճ. Ն'ր կը լինի, որ մեր բարձրատիճան հոգեւորականները զարթնէին քնից և ուշ դարձնէին ժողովրդի այժմեան ամենակարեւոր պահանջների վրա: Եպիսկոպոսի հետ տեսակցութեան ժամանակ այդ ամեն տխուր իրողութիւնների մասին խոսակցութիւն արի, բայց ինչպէս նկատեցի, սերբազանի վրա իմ խօսքերը տպաւորութիւն չարին: Մեղադրել եպիսկոպոսին այսպիսի ծանր և դժուար հանգամանքների մէջ չէ կարելի. նա գտնվում է այժմ միանգամայն պաշարված դրութեան մէջ. որքան և ցանկանալու լինի մտածել և գործել ժողովրդի բարոյական և մտաւոր զարգացման և առաջադիմութեան համար, այնու ամենայն ոչինչ չէ կարող առաջացնել, որովհետեւ ժողովրդի մէջ հակառակ կուսակցութիւններ կան, որոնց հայեացքը և գաղափարը բոլորովին հակառակ են ժողովրդի այժմեան ձգտումներին և պահանջին, մանաւանդ որ ինքն էլ ծերացած և ծանրացած լինելով, շատ դժուար է նրան գործ կատարել: Իսկ Շամախում ազգային և եկեղեցական գործերը վտանգաւոր դրութեան մէջ լինելով, անշուշտ հարկաւոր է նրան եռանդուն և գործունեայ անձն, որ կարողանայ քարկարգել և պահպանել ժողովուրդը ու եկեղեցին: Այս մասին դարձնում ենք վերահաստ Հայրապետի առանձին ուշադրութիւնը:

Անցաւոր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆԵՐՔԻՆԻՑ միջ գրում են: Մի քանի շաբաթ է արդէն որ այստեղ տիրում է տիֆ հիւանդութիւնը, որից մեռնում են ոչ միայն ազգաւոր մարդիկ, բայց և ունեւոր անձինք, ամենայայնիւ ընտանիքներից: Մեռնում են նոյնպէս մանուկներ: Ուշադրութիւն ենք դարձնում մեր զարդների և զինապալայի վարչութիւններին այն բանի վրա որ ուսումնարանում մանուկները բոլորն էլ խրմում են չուր մի տակաւնից և մի բաժանից: Ջուրը շատ անգամ լինում է պղտոր: Մէկ տուկաւնից և մի բաժանից չուր խմելու ամենահաստատ միջոց է վարակիչ հիւանդութիւնները տարածել:

Խնդրում ենք մեր բաժանորդներին, որոնք մինչև այժմ իրանց պարտքը չեն վճարել (Վրչակի) խմբագրութեանը, շուտով հասցնել մեզ թէ անցեալ և թէ այս տարվայ իրանց բաժանորդագիրը:

Ստացանք մի նամակ Պարսկաստանի Դավիթ քաղաքից, որի մէջ մեզ ասում են թէ վրչակի «Journal d'Orient» լրագրի հայոց օրգան դառնալը մեծ համակրութեամբ ընդունվեցաւ Պարսկաստանի հայերից, թղթակիցը յոյս ունի որ Դավիթում էլ կը գտնվեն բաժանորդներ այդ լրագրին:

ԱՍՏԱՐԱՆԻՑ մեզ գրում են: «Գեո. 1874 թականից սկսած Ասորական ունի Բարձրագոյն հաստատված եկեղեցական հոգաբարձութիւն, Բայց դեռ 1859 թականին, այդ հոգաբարձութիւնից առաջ, եկեղեցական գումարը, որ լինում է 84,000 րուբլ, կառավարելիս են լինում ժողովրդից ընտրված 12 գումարաւորներ, որոնցից զանձապետ նշանակվում է Ս. Գ. Ջանուսանց: Այդ թականին հրատարակվում է հանդուցեալ կայսրի անուանական հրամանը որ ասում է. «Բոլոր պայմանաւոր գումարները այսուհետեւ պէտք է դնվեն ԵՒ 4% օտարաւոր ժողովրդի կաշիքի»:

Հուանն ասում է. «Յանկազոյները կարող են իրանց գումարները դնել նշանակեալ ժամանակով և կամ յախտեան ժամանակ»: Եւ կանոնները աւելացնում են. «Կառավարութիւնը 20 տարուց յետոյ կը յայտնի այդ տոմսակիցները յետ գնելու միջոցները, ԵՄԿՍԵ, Ջանուսանց այդ հրամանի հիման վրա, առանց հասարակութեանց իրաւունք խնդրելու, վեր է առնում այդ 84,000 րուբլ աղքատների գումարը և դնում է յախտեանական ժամանակով, Նա առանց հասարակութեան կամքը ստանալու չունի իրաւունք այդպէս վարվելու աղքատների գումարի հետ, որովհետեւ դրա հետեանքն այժմ այն է, թէ նախ հասարակութիւնը բոլորովին զրկվում է հարկաւոր դէպքում իր գումարը յետ պահանջելու իրաւունքից, և երկրորդ մշտապէս զրկվում է տարեկան մի որոշեալ տոկոս ստանալուց: Այժմ Ջանուսան փախճանվել է: Միթէ Ասորականի հայ հասարակութիւնը չի սթափվի իր խոր քնից և օրէնքի հիման վրա չի պահանջի Ջանուսանցի իր ժառանգներին թողած 2 միլիոն գումար կարողութեանց իր աղքատների գումարը:»

Մի պարոն գրում է մեզ քաղաքային փոստով. «Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի վարչութեան մի սխալի կամ անհոգութեան վրա պէտք է ուշադրութիւն դարձնեն. զա մարմնամարդութեան (գիմնաստիկայի) ուսուցիչ չունենալն է: Այդ առարկան, ինչպէս յայտնի է, ոչ թէ միայն կազդուրում է մարմինը, բայց և փրկում է երիտասարդներից շատերին յայտնի դիպուածներում հաստատ մահից: Դաւիթի վրա մի քանի գերաններ և սանդուղտներ ունենալը, առանց զիմնաստիկայի կանոնաւոր դաստաւութեան, ոչինչ նշանակութիւն չունի:»

Մեզ պատմում են թէ տէր Ղեոնդ Խարաղեանց, Ներսիսեան դպրոցի նախկին գանձապահ, վերջապէս խոստովանել է թէ 3000 րուբլ գանձից վեր է առել և ծախսել է: Ասում են թէ հոգաբարձութիւնը պարտաւորեցրել է տէր Խորը ձրի ծառայել դպրոցին: Մեր կարծիքով հոգաբարձութիւնը սխալ է գործել, որովհետեւ արժանապատիւ քանանան շատ անգամ չի յաճախի դասերին, ձրի լինելու համար, պատճառ բերելով, ի հարկէ, թէ այսօր թաղումն է, վաղը մը կրտսերին է, միւս օր քնելին է, յետոյ պըսակն է և այլն: Աւելի նպատակայարմար կը լինէր ուրիշ միջոցներով պահանջել պակասած գումարը, քան թէ փեսայ վրա կրկին փեսա աւելացնել:

Երեւելի կատկովի լրագիրը, «МОСКОВСІЯ ВѢДОМОСТИ», որ ինչպէս միշտ սովոր է մատնութիւններ անել, օգուտ քաղեց Թիֆլիս քաղաքի կողմից հազէտներին տուած ճաշի ժամանակ պոֆէտոր խօջութիւն խօսած ճառից և տպեց իր էջերի մէջ հետեալ անմիտ հեռագիրը. «Խօջութն մի ճառ խօսեց, որտեղ ցանկացաւ հայերին քաղաքական ինքնադոյութիւն. լովեցան չլոյցներ և ուսններն ու վրացիները բացատրութիւն պահանջեցին խօջութնից: Այժմ լուում ենք թէ այդ հեռագիրն պատասխանը արդէն ուղարկված է հեռագրական Միջազգային ընկերութեան աղէնստի ձեռքով: Այդ պատասխանի մէջ ասված է որ խօջութն քաղաքական ոչինչ նիւթի վրա չէ խօսացել, այլ խօսել է հայոց գրականութեան զարգացման վրա:»

Լուում ենք որ պոֆէտոր վերստի, Օղեսոս գնալուց առաջ, պիտի մնայ մի քանի օր Սուխումի մէջ, որպէս զի ուսումնասիրի արեւադեմքին անարօպոլոգիական կէտից:

ԲԱԳՈՒԻ մեր թղթակիցը գրում է մեզ. «Գեո.

ցէ ոչ մի գաւառական քաղաքում այնքան չեն համակրում «Մշակ» լրագրին, որքան Բագրուի մէջ։ Անհնարին է նկարագրել թէ որքան հետաքրքրութեամբ ձեր լրագրի համարները այստեղ ձեռքից ձեռք են անցնում, փոստը ստացած ժամանակ։ Առհասարակ Բագրու միշտ արձագանք է տալիս ամեն ազգագրական գործերին։ Այս օր մոռացել, ինչպէս Հայաստանի սովոր ժամանակ, Բագրու հետեցեալ «Մշակ» հրատարակ, քան որով մէջ ժողովքը 7000 բնակչութիւն ունի։ Բագրուի քաղաքական համակրում է «Մշակին», բայց մանաւանդ մեր քաղաքի երիտասարդները։ Բագրու կարելի է բացատրել համարել, առհասարակ, գաւառական քաղաքներում իր եռանդի կողմից։ Այստեղ կայ Մարդասիրական ընկերութիւն, գրադարան, երկսեռ դպրոց, հայ-աւստրալանդական եւ ունեն իրանց դպրոցը, որ մի և նոյն ժամանակ և նրանց ժողովարանն է։ Քաղաքի փողոցները լայնացնելու և զեղեցկացնելու համար քաղաքային դռման մեծ գումարներ է ծախսում։ Նորերս սկսել են ծովի դէպի քաղաքն ընկած ափերի վրա մի քարաշէն պատ քաշել և նրա առջևի ճանապարհը ուղղել։ Պէտք է աւելացնենք որ տեղիս հայ հասարակութեան ամենահաջող մասը կազմում են ոչ թէ բնիկ սակաւթիւ հայերը, այլ օտարականները, մանաւանդ չուշեցիները և չամախեցիները։ Զարմանալի է որ չամախեցիները, որոնք այստեղ աշխատակերպ և եռանդոտ են, իրանց հայրենի քաղաքում, Շամախում, ամենամեծած մարդիկ էին։

Մեզ գրում են Ի.Գ.Ի.Ի.Բ., որ այդտեղի հասարակութիւնը շատ դժգոհ է տեղական բժշկից, Շամախը հիւանդներից կատարելապէս զուրկ են մնում բժշկի հոգաբարձութենից։ Բացի սորանից իրողութեամբ զեղատու (ապտէկա) չը կայ և զեղեր բերելու համար, պէտք է գնել կրկան, թղթափէրը հարցնում է, միթէ Սուրմալուի վիճակի հասարակութիւնը չէ կարող իր մէջ մի գումար հաւաքել և իրողութեամբ հիմնել մի զեղատու, ի հարկէ կառավարութենից այդ հիմնարկութեան համար թոյլտուութիւն խնդրելուց յետոյ։

ՂԱՐՍԻՅ մեզ գրում են որ սեպտեմբերի բնակչութեամբ այդտեղ հայոց ուսումնարանի աշակերտները մի թատրոնական ներկայացում տուցին, որից շատ գոհ մնաց հասարակութիւնը և խնդրեց կրկնել։

Ղարսից մեզ գրում են։ Աւերի առաջ ունեւում այն, որ Ղարսի նման մի նոր դարգացող և ուսումնադուրկ տեղի համար խիստ մեծ կարեւորութիւն ունի ազգային կրթութեան և լուսաւորութեան տարածումը, այդ պատճառով հրատարակում ենք ազգային բարեարարների և գործիչների ուշադրութիւնը Ղարսի երկսեռ չքաւոր դպրոցների վրա, այդ հաստատութիւններին կարողութեան չափ ներթափանց օգնելու համար, որպէս զի նրանց գոյութիւնը ապահովվի։

Հետաքրքիր է իմանալ ինչ է անում այն յանձնաժողովը, որ ընտրվել է Շաբուրովի և Գաւառեանց եկեղեցու գործը քննելու համար։ Կարծում ենք որ մի ամիս անցել է, իսկ յանձնաժողովը, որքան յիշում ենք, խոստացել էր ընտրվելուց մի ամիսից յետոյ ներկայացնել եկեղեցու ծխականներին իր աշխատութիւնների եզրակացութիւնը։

Ստանում ենք գրելիք ամեն օր բազմաթիւ տեղեկութիւններ Ներսիսեան դպրոցի վարչութեան, տեսչի, ուսուցիչների, վերակացունների և հոգաբարձուների գործունէութեան մասին։ Բայց ինչպէս մեր շատ ուրիշ ազգային հիմնարկութիւնների մասին, այնպէս էլ Ներսիսեան դպրոցի մասին կատարելապէս ապարդիւն ենք համարում մի օր և է բան գրելու։

Սեպտեմբերի վերջին օրերումս ցրտերը յանկարծակի սկսվեցան թիֆլիսում։

Մեզ պատմում են որ մինչև Մամբրէի Էմիլիանից թիֆլիս վերադառնալը, իբրև նրա տեղապահ արդէն հասել է թիֆլիս Սեդրակեան Արիստակէս վարդապետը։

Մեզ հաւատացնում են, որ թիֆլիսի մէջ իր կացութեան կարճ ժամանակամիջոցում Մամբրէ վարդապետը կարողացել է զիջել 10.000 բուրլ գումարի մի կարողութիւն։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

Վիէնայի «Journal d'Orient» լրագրում կարդում ենք հետեւեալ նամակը Կ. Պոլսից գրված։

Ես շատ ցաւում եմ որ ստիպված եմ ձեզ խոստովանվել թէ ամենամեծ թիւով տպաւորութիւններն եմ ենթարկվել վերադառնալով այստեղ։ Մի կողմից անշափ մեծ և հակաքաղաքական խտրութիւն է տիրում այստեղ թիւրքաց կառավարութեան կողմից հայերի վերաբերութեամբ։ Լրագրիները խտրանքով են, թատրոնները փակվում են կառավարութեան հրամանով, միայն այն պատճառով որ գործողները այդ հիմնարկութիւնների մէջ հայեր են։ Արգելված է ներկայացումներ տալ հայոց լեզուով, արգելված են հայոց երգեցողութիւնները։ Հայաստանում կատարվում են ամեն տեսակ հայաժանքներ և ձեռնմանքներ նախագծված պլանով, աշխատում են սիստեմատիկաբար ջնջել հայոց ազգութիւնը, — այդ ամենը կատարվում է որպէս զի այդ մակիւրվելու միջոցներով չէզոքացնեն եւրոպական պետութիւնների դիտաւորութիւններն ու գործողութիւնը։ Հայերի այժմեան վիճակը աւելի թշուառ է, քան թէ եւրոպայի միջամեծելուց առաջ։ Պետութիւնները դժբաղդապէս բաւականաչափ համբարշխ չեն այդ խնդրի մէջ և պարզապէս տեսնում ենք արդէն որ պետութիւններից իւրաքանչիւրը հպատակվելով իր առանձնական շահին, պատրաստ է նորից զոհել հայոց ազգութեան վիճակը իր ետականութեան զգացմունքին։ Դուք պետութիւններից իւրաքանչիւրի գործելու և հայեացքի եղանակը ծանուցում էք արեւելեան խնդրի վերաբերութեամբ։ Շատերը, կարծես, տրամադիր են նորից զոհ բերել Հայաստանը թիւրքիստի բարեկամութիւնը ստանալու համար։

Թիւրքաց հայերը, շարունակում է թըղթակիցը, տատանում են յուսահատութեան և ատելութեան մէջ. նրանք հառաչում են քրիզերի հարստահարութիւնների և թիւրք տեղական պաշտօնեաների անյաւաղութեան տակ։ Հայերը տրամադիր են հաւատալ որ կենտրոնական վարչութիւնը իրան նպատակ է դրել զիստովն ոչնչացնել ազգը։ Սակայն այդ աղնիւ, աշխատասէր, խաղաղ և արդիւնաբերող ազգը արժանի է աւելի լաւ վիճակի։

Իր նամակի վերջում թղթակիցը իր համակրութիւնն է յայտնում դէպի Վիէնայի Ֆրանսիական թերթը և յայտնում է թէ ուղարկում է խմբագրութեանը նշանաւոր դոկումենտներ, որոնց միջոցով կը մերկայցին շատ ճշմարտութիւններ։

«НОВОЕ ВРЕМЯ» ԼՐԱՔՐԻՆ ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆԸ

«Новое Время» լրագրին Կ. Պոլսից գրում են սեպտեմբերի 3-ից։

Հայոց խնդիրը նորից առաջացնում են Լօրդ Դէօֆերինի եռանդոտ առաջարկութիւնների պատճառով Բ. Գրանը, Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածի իրագործման մասին պետութիւնները նորից ստիպված են փորձել իրանց համբերութիւնը թիւրքերի յամառութեան դէմ։ Ինչպէս յայտնի է յիշեալ յօդուածը ի նկատի ունի հայերի և թէ ոչ կատարեալ ազատութիւնը ասիական դարեւոր լուծից, որ ծանրացել է և ծանրանում է նրանց վրա, գոնեա նրանց վիճակի բարւոքումը ճշմարիտ,

հայերի վիճակը վատ է և մանաւանդ խղճալի է, որովհետեւ եւրոպան առանձին ուշադրութիւն չէ դարձրել նրանց վրա և ցաւակցութիւն չէ յայտնել դէպի նրանց վիճակը։ Բերլինի կոնգրեսի ժամանակն էլ քիչ էր մնում մոռանալին հայերին և միայն վերջին բուլղոսեան նրանց յիշեցին Բ. Գրանից ծննդած ազգութիւնների հոգաբարձու քաղաքագէտները։ Այդ իրողութիւնը մեկնվում է այն հանգամանքով, որ թիւրքահայատակ բոլոր քրիստոնեայ ազգերից հայերը հեռացած են Ասիայի խորքերը, հեռեւեալ են նրանց դրութիւնը այնքան չէ կարող ենթարկվել եւրոպայի հսկողութեանը, որքան միւս ազգութիւնների վիճակը։ Զարմար հաղորդակցութիւններից զուրկ, հասարակական կեանքի ամենատարբերական պահանջների վերաբերութեամբ անապահով թիւրքաց Հայաստանը ընդարձակ ասպարէզ է ներկայացրել թիւրքաց կամայականութեան գործադրութեան համար, իսկ թիւրք աստիճանաւորներն էլ իրանց բարբարոսութեան մէջ քրիզերին օգնականներն են դարձրել։ Հայերը, ինչպէս ասում են, ստիպված են երկու կրակի մէջ ապրել։ Մի կողմից թիւրքը առնում է նրանցից ամեն տեսակ հարկեր, միւս կողմից քրիզը կողուտում է այն բոլորը, ինչ որ մնում է օրինական և սիստեմատիկաբար կատարված բռնութիւններից յետոյ։ Երեք տարիներ անցել են այն ժամանակից, ինչ հայերի համար յուսոյ ծառազայթ երեւաց, որ պետութիւնները վերջապէս նրանց ձեռք կը մեկնեն, Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածի հիման վրա խոստանալով նրանց վիճակը բարւոքող վերանորոգութիւններ։ Այդ ժամանակամիջոցի ընթացքում Բ. Գրանը միջոց ունէր իր հպատակ հայերի հետ հաշտվելու համար։ Բայց իսկապէս ի՞նչ պատահեց։

Այս հարցի վերաբերութեամբ բոլորող պետութիւնները լուռ էին թիւրքաց կառավարութեան պարտականութիւնների մասին, իսկ Կ. Պոլսի մէջ այդ պարտականութիւնները կատարելու համար աւելի լաւ միջոց չը գտան, քան թէ հայերի վիճակի վատթարացնելը։ Իր սովորութեան համեմատ Բ. Գրանը հայոց հարցը հեշտացնելու տեղ կարողացաւ աւելի էլ նրան խըճրճել և նախկին դժուարութիւններին նորելու տեղացնել։ Այդպիսի դժուարութիւններից մէկը Սիւի հայոց կաթողիկոսի յանկարծակի նշանակելն էր, որ այս անգամ կատարվեցաւ առանց Էմիլիանի կաթողիկոսի համաձայնութեան, որ հայ եկեղեցական իերարխիայի ամենաբարձր տեղն է։

Այդպիսի գործը կարող է շատ փոքրացնել պետութիւնների առանց այդ էլ անհաստատ յոյսերը Հայաստանի մէջ վերանորոգութիւնների իրագործման մասին։ Դժուար է հասկանալ, թէ ի՞նչ է Բ. Գրանը այդ կողմից աւելացնում է դժուարութիւնների թիւը։ Եթէ հայերի եկեղեցական հարցերը թիւրքիայի ներքին քաղաքականութեան առարկայ են կազմում, ուրեմն պէտք չէ մոռանալ, որ բոլոր հայերի կաթողիկոսը, «հայոց պապը» ապրում է Էմիլիանի մէջ, այսինքն ուստաց հոգի վրա։ Այսպիսով՝ Բ. Գրան վերջիշեալ կարգադրութենից երեւում է, որ նա ոչնչացնում է կամ անուշադիր է թողնում ուստահպատակ հայերի եկեղեցական միութիւնը միւս հայերի հետ։

Բ. Գրանը, այդպիսի գործ կատարելով, ակնհայտ է, որ լաւ չէ հասկանում նրա մեծ նշանակութիւնը։ Էմիլիանը հայ-լուսաւորչականների համար միշտ կենտրոնատեղի է և

զեկ, ունենալով նրանց աչքում պապական Հռոմի նշանակութիւնը, նա միշտ հայ աւերակների աղօթատեղի է հայ աւերակների գոմարման տեղ է եղել։ Կաթողիկոսը միշտ ապրել է իր վանքի մէջ և արեւելեան այլ պետերի նման անսահման իշխանութիւն է ունեցել իր հպատակների վրա։ Նրան տուած այցելութիւնները միշտ փառաւոր են եղել և նրանց ժամանակ հպատակութիւն և հնազանդութիւն է յայտնվել։ Մինչև այժմ Էմիլիանը հայերի եկեղեցական և քաղաքական կենտրոնատեղի է եղել և Էմիլիանի վրա իշխանութիւն ունեցող կաթողիկոսը ունեցել է իսկական իշխանութիւն բոլոր հայերի վրա և ամբողջ Հայաստանի քաղաքական համակրութիւնն է փայելել։ Ինչպէս երեւում է Բ. Գրանը չը զիտէ կամ չէ կամենում այդ բանն իմանալ։ Նա քրիզերին գրողում է հայերի դէմ, դիմում է կեղծ շրջաբերականների վերանորոգութիւնների խոստմունքներով, որոնք թղթի վրա էլ տեղ չեն ունեցել, և այդպիսով իր իշխանութիւնը Հայաստանի մէջ ապահով է համարում։ Բայց չերեւոյթական և յուսական խնդիրները ցոյց տուին, թէ եւրոպան մինչև որ աստիճան կարող է հաւատալ սուլթանի խոստմունքներին, իսկ հայոց կաթողիկոսի նշանակելը պէտք է համոզե պետութիւններին, որ անկարելի է յուսալ Բ. Գրան կամքի և պատրաստականութեան վրա Բերլինի դաշնագրի իրագործելու մասին հայերի վերաբերալ։ Միւս կողմից հայկական խնդրի վերաբերութեամբ գեոպոլիտիկ մէջ կատարվող բանակցութիւնները, որոնց սկզբնապատճառ դարձել են անգլիական և ռուսաց դեսպանները, շատ չեն կարող անհանգստացնել Բ. Գրանը։ Հայաստանի մէջ մտցնելի վերանորոգութիւնների հարցը չերեւոյթական և յուսական սահմանները ուղղելու հարցերի չափ նշանաւոր չէ։ Որքան վերջինները կարող էին խանգարել եւրոպական խաղաղութիւնը, հետեւապէս հետաքրքիր էին եւրոպական պետութիւնների համար, նոյնքան հայոց խնդրի լուծման մէջ շատ քիչ են հետաքրքրված նոյն կառավարութիւնները։ Այսպիսով եւրոպայի ծնունդ Բ. Գրան վրա հայկական հարցի վերաբերութեամբ նոյն բնաւորութիւնը չի ունենայ, ինչ որ ունէր չերեւոյթական և յուսական խնդիրների վերաբերութեամբ։ Այս անգամ նախագծված է ազգել թիւրքաց կառավարութեան վրա ոչ թէ սպառնալիքներով և ուղղակի ծնունդ գործելով, այլ համոզմունքի ոյժով։ Գոնեա պետութիւնների ներկայացուցիչները նորեւումս հաւաքվեցան ուստաց դեսպանի մօտ և կազմեցին այն զխաւոր վերանորոգութիւնների նախագիծը, որոնք հարկաւոր են փոքր-Ասիայի և հայերով բնակեցրած նահանգներին։ Գեոպոլիտիկ մտադիր են այդ նախագիծը ներկայացնել Բ. Գրանը և առաջարկել նրա իրագործումը այն դէպքում, եթէ ինքը թիւրքաց կառավարութիւնը ոչինչ չի անի հայկական խնդիրը լուծելու համար։ Պետութիւնների ներկայացուցիչներից իւրաքանչիւրը այդ առիթով տեսնվել է Ասիական հայկական խնդիրը լուծելու համար։ Պետութիւնների ներկայացուցիչները և նրանց զեղծութիւնները ուղղելու համար Արտաքին գործերի մինիստրը շտապեց հաւատացնել միջնորդներին, որ ամեն բան իր կատարվի։ Բայց Լօրդ Դէօֆերին չը բաւականացաւ այդպիսի խոստումով։ Նա տեսութիւն ունեցաւ սուլթանի հետ, որին առաջարկեց նոյնը, ինչ որ Ասիական հայերին և